* * *

Հայոց ապաբախտ գրողը նըստած
Ու միտք էր անում.– ինչ անեմ, աստված,
Թերթը փող չունի,– վարձ չի վըճարում,
Գիրքն առնող չունի,– գիրք չի վաճառվում,
[Անվարձ ու անհաց] ես ինչպես գըրեմ.
Սակայն... բան չըկա, պետք է համբերեմ.
Երբ որ լրանա 40 տարի,
Ազգը հոբելյան պիտի կատարի:
– Կախարդական այն աշխարհում երջանիկ,
Ուր ապրում են երազները...
– Էդ ինչ ես նըստել, այ... մարդ
. . . . . անհոգ ու անդարդ,
Եկել են ահա ձմեռվան օրեր,
Պետք են մեզ պաշար, ձմեռվա շորեր:
– Ինձ մի՛ խանգարիր, հեռացիր, ա՛յ կին.
Կըլինի անշուշտ ամենն իր կարգին.
Դու միայն սպասիր 40 տարի...
Ազգը հոբելյան պիտի կատարի...
– Կախարդական այն աշխարհում երջանիկ,
Ուր ապ...
– Հայրի՛կ, ներս մըտավ ուսանող որդին.
Ինչ ասեմ հիմի ես իմ վարպետին.
Ասում էր՝ էգուց էլ դպրոց չըգա,
Ով փող չըբերի, ուսման վարձը տա:
– Հա՛, որդի, կըտանք, իրավ ես ասում.
Վարպետն էլ է մարդ, ապրել է ուզում...
Բայց թող սպասի 40 տարի...
Ազգը հոբելյան պիտի կատարի...
Ո՞ւրտեղ մնացի... ա՛յ քու վարպետը
[Ջըհանդամ] գընա, հենց դու էլ հետը...
«Կախարդական այն աշխարհում երջանիկ,

Ուր ...»։
– Պարոն, դուք երբ որ ունեիք կարիք,
Էնքան բան թողի ես ձեզ ապառիկ.
35 Ախար չէ՞ մեղք ենք... մենք էլ ենք ձերը,
Դռան մեջ կանգնեց խանութի տերը։
– Հա՛, կըտամ, կըտամ... ինչ ես խանգարում,
Տեսնում ես՝ նըստած [ես բան] եմ գըրում...
Գընա, սպասիր 40 տարի...
40 Ազգը հոբելյան պիտի կատարի...
– Ո՞րտեղ մնացի... ինչ էի գըրում...
Ինչ եք ներս գալիս մարդու խանգարում...
«Կախարդական այն աշխարհում...»։
– Շատ համբերելուց կըտըրվեց չարես,
45 Քո պարտքը, ախպեր, պիտի վըճարես,
Թե հենց միշտ էդպես հայոց գըրողը
Պիտի կըլանի ձեռն ընկած փողը...
[– Գրում եմ, ախպեր, հանգիստ թող արա,
Չի կորչիլ տված փողդ ինձ վրա.]
50 Դե գոնե սպասիր ... 40 տարի –
Ազգը հոբելյան պիտի կատարի...
Ինչ եղավ [թուղթս] գրիչս... ո՞ր կողմը կորավ...
Էսպես էլ մարդի՞կ կըլնեն անիրավ...
«Կախ...»։
55 Հոգին էլ էստեղ հասավ բերանը,
Ու մեծ գըրողը կանգնեց դռանը.
– Դեհ, ժամը հասավ, պատրաստվիր, պոետ,
[Տենչերդ] հավաքիր ու արի ինձ հետ –
Վա՜հ, այսպես անժամ... դրամաս հապա՞...
60 [Ցնորք, ծրագիր,] ուսում... Եվրոպա...
Հըրեշտակն այստեղ այնպես ծիծաղեց,
Խեղճ մարդը, իսկույն դալկացավ, պաղեց...
Եվ էլ չըսպասեց 40 տարի...
Ազգը մեծ թաղում պիտի կատարի։